Հավելված 2
2023 թ. Դեկտեմբերի 7-ին
կնքված N ՀՀԽԱ-ԴԱՄ-01/23
պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն

1. Ընդհանուր տեղեկատվություն		
Ծրագրի անվանում	Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի հանրային հեռուստաընկերության ենթակառուցվածքների ապահովում (1-ին փուլ)	
Դրամաշնորհի N	N ՀՀԽԱ-ԴԱՄ-01/23	
Դրամաշնորհատու կազմակերպություն	«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ	
Դրամաշնորհառու կազմակերպություն	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	22.07.2023-14.12.2023թթ.	
Հաշվետու ժամանակահատված	22.07.2023-14.12.2023թթ.	
Ներկայացման օր	18.12.2023թ.	
հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Գործադիր տնօրենի տեղակալ-ֆինանսական տնօրեն Արարատ Հակոբյան	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

	Հատկացված գումար	Փաստացի ծեռքբերում
Խմբագրություն ԱՍԲ-7 մասնաշենքի կիսանկուղի վերակառուցում	48,500,000.00	48,366,270.00
Անտառատնկման նախապատրաստական աշխատանքներ	6,000,000.00	-

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Սույն դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում «Խմբագրություն ԱՍԲ-7» մասնաշենքի կիսանկուղի վերակառուցման աշխատանքները կատարվել են պայմանագրով սահմանված ամբողջական ծավալով: «Խմբագրություն ԱՍԲ-7» մասնաշենքի վերակառուցման գծով մյուս աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2024թ.-ին իրականացվելիք դրամաշնորհային ծրագրի ընթացքում:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

-//-

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Անտառատնկման աշխատանքների, մասնավորապես հողի նախապատրաստման և ցանկապատման աշխատանքների իրականացման փուլում կատարողի կողմից իրականացված փաստացի աշխատանքների գծով տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից ի հայտ են եկել որոշակի թերություններ, որոնք ենթակա են վերացման, սակայն հաշվի առնելով եղանակային պայմանները՝ ներկայումս իրատեսական չէ սույն թերությունների վերացումը: Այդ իսկ պատճառով սույն աշխատանքները նախատեսվում է ավարտին հասցնել 2024թ.-ի մարտ և ապրիլ ամիսների ընթացքում՝ 2024թ. իրականացվելիք դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

-//-

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

-//-

18.12.2023թ.